3-4

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Հանելուկ

Սահուն զույգ տախտակ,
Ձյունը՝ նրանց տակ,
Առջևից՝ կեռ քիթ,
Հետևից՝ զույգ գիծ։

Ա) սահիկ
Բ) դահուկ
Գ) չմուշկ
Դ) արկղ
Ե) սառույց

2. Պատասխանի տարբերակներից ո՞րը գոյություն չունի։

Ա) նախապապ
Բ) նախամայր
Գ) նախազավակ
Դ) նախատատ
Ե) նախահայր

3. ***Բարձր*** և ***ցածր*** բառերը զույգ են։ Եթե ***փափուկ, բութ, լայն, սուր, կարճ, կոշտ, երկար*** բառերը նույն սկզբունքով բաժանենք զույգերի, բառերից մեկը դուրս կմնա։ Ո՞րն է այդ բառը։

Ա) փափուկ
Բ) կարճ
Գ) բութ
Դ) սուր
Ե) լայն

4. ***Քաջ, կտրիճ, համարձակ, կտրիչ, անվախ*** բառերից չորսը նույն «ընտանիքից» են։ Ո՞ր բառն է «խորթ»։

Ա) քաջ
Բ) կտրիճ
Գ) համարձակ
Դ) կտրիչ
Ե) անվախ

վերարտադրումը միայն «ԱՅԲ»-ի համաձայնությամբ

5. ***Գանձասարի դպրոցի երեխաները զարմանքով էին ընթերցում «Ժայռը»:***

Բերված նախադասության բառերը կապված են ինչ-որ օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րն է խախտել այդ օրինաչափությունը:

Ա) դպրոցի
Բ) Գանձասարի
Գ) երեխաները
Դ) ընթերցում
Ե) ժայռը

6. Ո՞ր տարբերակի բառից պտուղ չես քաղի:

Ա) թթենի
Բ) դեղձենի
Գ) բորենի
Դ) թզենի
Ե) բալենի

7. Քանի՞ ընդհանուր հնչյուն ունեն ***ողորկ*** և ***կողով*** բառերը:

Ա) 2
Բ) 3
Գ) 4
Դ) 5
Ե) 6

8. Հայոց ո՞ր թագավորի անունն է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

ստեղծել, սիրելի, օգնական, արքա, զահ, սնդուկ

Ա) Տիգրան
Բ) Սմբատ
Գ) Մենուա
Դ) Արշակ
Ե) Գագիկ

9. Մեղվիկը խառնեց ***պարետ*** և ***տաճար*** բառերի բոլոր տառերը, հետո վերադասավորեց և նոր բառ ստացավ: Ո՞ր բառը ստացավ մեղվիկը:

Ա) տնտեսագետ
Բ) պատմաբան
Գ) ճարտարագետ
Դ) պարագետ
Ե) ճարտարապետ

Վերարտադրումը միայն «Այբ»-ի համաձայնությամբ

10. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

ըմբիշ — իշխան — անապատ — ***— ամուր — ուրբաթ — աթոռ***

Ա) ատոմ
Բ) ամեոբա
Գ) ատամ
Դ) ատյան
Ե) ամառ

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Հանելուկ

Ի՞նչն է:
Հինգ տունիկ, հինգ բունիկ,
Հինգ եղբոր տաք ընտանիք:

Ա) ակնոց
Բ) ձեռնոց
Գ) վզնոց
Դ) գզրոց
Ե) փողոց

12. Տառաշարի յուրաքանչյուր տառը փոխարինիր այբուբենում նրա նախորդ կամ հաջորդ տառով այնպես, որ ստացվի բառ: Պատասխանի տարբերակներից որի՞ն է «հարազատ» ստացված բառը:

Ս, տ, ղ, լ, յ

Ա) վարորդ
Բ) ձկնորս
Գ) խոհարար
Դ) հոտաղ
Ե) նկարիչ

Վերարտադրումը միայն «ԱՄԲ»-ի համաձայնությամբ

13. Ո՞ր տառն է չարաճճիություն անում՝ նույն կերպ խցկվում ***ման, բաղ, գոգ, մատ, բակ, մեկ*** բառերի մեջ ու նորացնում դրանք:

Ա) ն
Բ) ա
Գ) ր
Դ) չ
Ե) ղ

14. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

5^1 10^2 7^1 2^2 1^2 9^2 5^2 3^4

Ա) պատշգամբ
Բ) նապաստակ
Գ) հայրենիք
Դ) բազկաթոռ
Ե) հաղթանակ

15. Նախադասության մեջ քանի՞ բառում է սխալ թույլ տվել Անգետիկը.

Ագնազը արեվի ծաքելուն պես տառրինակ ցատքերով հասավ կանանչով ծացկված դաշտ:

Ա) 6
Բ) 7
Գ) 8
Դ) 9
Ե) 10

16. *«Դե, սպասի՛ր» մուլտֆիլմի հերոսներ* ***<u>Նապաստակը</u>*** *և* ***<u>Գայլը</u>*** *հակառակորդներ են:* Այս նախադասության ընդգծված բառերի տեղերը կարող ենք փոխել, և իմաստը կմնա նույնը.

«Դե, սպասի՛ր» մուլտֆիլմի հերոսներ <u>Գայլը</u> և <u>Նապաստակը</u> հակառակորդներ են:

Պատասխանի տարբերակներից որո՞ւմ այդ գործողությունը հնարավոր չէ կրկնել:

Ա) <u>Նապաստակը</u> և <u>Գայլը</u> մասնակցում են դիմակահանդեսի:
Բ) Սահադաշտում Գայլը <u>սայթաքեց</u> և <u>ընկավ</u>:
Գ) Գայլը վախենում է <u>Առյուծից</u> ու <u>Գետաձիուց</u>:
Դ) Նապաստակը <u>թռչկոտում</u> է և <u>երգում</u>:
Ե) Նապաստակը հնարամիտ ու <u>ճարպիկ</u> է:

Վերահրատարակումը միայն «Ալֆա»-ի համաձայնությամբ

17. Ամսանուններից մեկը հնարամտորեն թաքնվել է մրգերի շարքում: Ո՞ր տարբերակի ամսանունն է «հնարամիտը»:

Հոն, նուռ, տանձ, կիվի, կեռաս

Ա) ապրիլ
Բ) մայիս
Գ) հունիս
Դ) հուլիս
Ե) մարտ

18. Ի՞նչ է թաքցրել մեղվիկը:

մանրակերտ = ներկա +

Ա) ամսանուն
Բ) տղամարդու անուն
Գ) դրամական միավոր
Դ) շինության տեսակ
Ե) երկարության չափման միավոր

19. Պատասխանի տարբերակներից ո՞րը նոր շունչ կտա ***այր, այրի, արար, արկած, տառ*** բառերին:

Ա) մեն
Բ) հո
Գ) վեվ
Դ) խե
Ե) սե

20. ***Ծաղկանուշը, Աղասին, Վաղարշակը, Աղավնին, Բաղդասարը և Սաղաթելը վաղ առավոտյան ճանապարհվեցին անտառ:***

Նախաճաշի ժամանակ պարզվեց, որ բոլորն էլ մոռացել են մի շատ կարևոր բան: Ի՞նչ էին նրանք մոռացել: Պատասխանը թաքնված է նախադասության մեջ:

Ա) դանակ
Բ) հաց
Գ) գդալ
Դ) աղ
Ե) պանիր

Հեղինակային իրավունքը միայն «Կոդ»-ի համաձայնությամբ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. *Պապիկի ղեկա**վար որդ**ուն ցուցադրեցին հեռուստատեսությամբ* նախադասության մեջ թաքնվել է ***վարորդ*** բառը։
Բերված նախադասություններից որո՞ւմ հյուսնի գործիքի անվանում թաքնված չէ։

Ա) «Ձեր ժամացույցն ունի երկու սլաք. ցանկանո՞ւմ եք՝ ավելացնենք երրորդը»։
Բ) Զբոսաշրջիկը մոլորվել էր անծայրածիր անապատում։
Գ) Հողատիրոջ ծառան դաշտում քրտնաջան աշխատում էր։
Դ) Երկու փետուր ագռավի պոչից պոկվեց։
Ե) Ուժեղ տղան կոտրեց ամուր ճիպոտը։

22. Միերը պատմվածք է հորինել։ Ահա՛ այդ պատմվածքի բոլոր նախադասությունները.

1. Մտածեցի՝ նրան ալիքն է շպրտել ափ։
2. Այդ ձուկը կարողանում է ինքնուրույն դուրս գալ ջրից և սողալ ցամաքում։
3. Մի օր քայլում էի գետափով։
4. Սակայն պարզվեց, որ դա անաբաս է։
5. Տեսնեմ՝ ավազի վրա մի ձուկ է ընկած։

Ի՞նչ հերթականությամբ պետք է գրվեն դրանք։

Ա) 3, 5, 2, 4, 1
Բ) 5, 3, 1, 2, 4
Գ) 2, 4, 1, 5, 3
Դ) 4, 5, 1, 3, 2
Ե) 3, 5, 1, 4, 2

23. Երկրաչափական պատկերներից յուրաքանչյուրը փոխարինում է մեկ տառ։ Միևնույն պատկերը փոխարինում է միևնույն տառը։ Պատասխանի ո՞ր տարբերակը տեղ չի գտել աղյուսակում։



Ա) պարկ
Բ) պար
Գ) կապար
Դ) կրակ
Ե) կարապ

Հեղինակային իրավունքը միայն «ԱՄԲ»-ի համաձայնությամբ

24. Պահմտոցի խաղալիս Արսինեն, Զարինեն, Կարինեն, Արփինեն ու Արմինեն իրենց անունները գրեցին մի աղյուսակում և խնդրեցին Վահեին, որ ընտրի իրենցից մեկի անունը, որ ընտրվածը դառնա փնտրողը: Վահեն նրանց հանձնեց մեկ այլ աղյուսակ, որում աղջիկները կարող էին գտնել, թե ով է լինելու խաղում փնտրողը: Ո՞ր անունն էր ընտրել Վահեն:

Ա) Արմինե
Բ) Արսինե
Գ) Կարինե
Դ) Արփինե
Ե) Զարինե

Փ	Բ	Ժ	Ջ	Ի	Շ
Տ	Ն	Վ	Չ	Ֆ	Պ
Ա	Ճ	Ց	Ո	Օ	Խ
Դ	Յ	Զ	Ր	Ճ	Ն
Լ	Թ	Հ	Մ	Կ	Ը
Ս	Ե	Գ	Է	Ք	Ծ



25. Գաղտնի տեղեկություններ հաղորդելու համար մեր նախնիները ստեղծել են «կոտորակագիր» կոչվող ծածկագիրը, որում հայոց այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացվում է որպես կետերից ու մի գծիկից բաղկացած պատկեր: Այդ տառերից երեքը երևում են նկար 1-ում: Կռահիր, թե ինչ օրինաչափությամբ են կետերը կապված տառերի հետ, և որոշիր, թե ինչ բառ է ծածկագրված նկար 2-ում:

Նկար 1



Նկար 2



Ա) երազանք
Բ) դասարան
Գ) կերակուր
Դ) ուսուցչուհի
Ե) հայրենիք

26. Քառակուսու մեջ գտիր և ջնջիր ընդհանուր գաղափարով միավորված վեց բառ։ Բառերը կարող են կարդացվել բոլոր ուղղություններով և չեն բեկվում։ Միևնույն տառը կարող է օգտագործվել մի քանի անգամ։ Չջնջված տառերով կազմիր մեկ բառ։ Պատասխանի տարբերակներից ո՞րն է ստացված բառի հականիշը։

Ր	Ո	Զ	Ն	Խ
Ր	Ո	Լ	Ա	Ս
Դ	Ե	Ղ	Զ	Ջ
Հ	Ո	Ն	Վ	Ր
Ղ	Ե	Լ	Ա	Բ

Ա) սկիզբ
Բ) ճիշտ
Գ) երկար
Դ) անհանգիստ
Ե) հանդարտ

27. Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը։

գիրք — 1 ափսե — 2 պատուհան — 3 օղ — 1
գրակալ — 4 սեղան — 3 պահարան — 4 օդանավ —

Ա) 2
Բ) 3
Գ) 4
Դ) 5
Ե) 6

28. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրվել նկարելուկով։

Ա) Մեխակն ու Վարդանը սարից իջան տուն։
Բ) Եղանակը Սարոյին դուր չեկավ։
Գ) Մեխակն ու Վարդանը Սարոյի հետ եկան տուն։
Դ) Մեխա՛կ, Նվա՛րդ, Սարո՛, եկե՛ք տուն։
Ե) Մեխա՛կ, Նվարդի հետ սարից արի՛ տուն։